

— Յուստիատելու բան չկայ, Տեր,— ըսաւ.— եթէ աս գիշեր աշխատինք ամէնս եւ անդադար, կրնանք այդ բերդն առնուլ

— Ինչպէ՞ս,— հարցուց Շէյխը:

— Եթէ բարձրեն առնուլ անկարելի է, կաշխատինք գետնի տակէն կը փորենք այս պարիսպներուն հիմքը, եւ աստուած կը յաջողէ:

— Լաւ է այս խորհուրդը,— ըսաւ Շէյխը, որ վաթսունամեայ մարդ մ'էր, եւ որու վրայ մեծ համարմունք ունէին իւր զօրականք, վասնզի Մարգարէին առաջին սպաներուն մէկն էր:

Ուստի բահի, բրջի պատրաստութիւնք տեսնուեցաւ, եւ երբ գիշերն եկաւ սկսան խրամը փորել եւ խորն իջնել այդ ճիւղները շարունակ կը փոխուէին եւ մրջիւններու պէս կ'աշխատէին. երբ մէկ մասը հող կը կրէր. միւսը փորուած հողէ կամարը ցիցերով կ'ապահովէր, այսպէս առաջ կ'երթային եւ պարսպին կը մօտենային: Իսկ բերդին պահապանները միամիտ կեցած եւ փորձ մարդ ներսը չի գտնուելով, վասնզի Տիկինը բոլոր պատերազմի հմուտ անձինքը ղրկած էր որդուոյն հետ, պարիսպներուն բարձրութեան վստահացած հանգիստ նստած կը սպասէին: Մահաբեր գործը կը յառաջանար, եւ դիւական յաջողութեամբ ոչ ժայռ, ոչ արգելք մը կը հանդիպէր այդ ճիւղներուն, որք առաւօտեան դեմ պարիսպը անցած էին եւ սկսէր էին բարձրանալ. եւ որպէսզի պաշարելուց ուշադրութիւնը գրաւէին՝ զօրաց խումբն սկսաւ յարձակումներ ձեւացնել, սանդուխներ բերել պարիսպներուն մօտեցնել, նետաձգութիւնք ընել դէպի պարիսպները, ան եւ ժայռերէ վեր ելնել եւ կախուիլ: Պահապանք թէպէտ թուով քիչուոր՝ բայց պաշտպանութեան համար գիրենք բաւական տեսնելով ավիզի զուարճութիւն քան թէ երկիւղ կը զգային այս տեսաբանէն. ուստի պարսպաց աշտարակներուն մէջ երբ միամիտ կանգնած էին, յանկարծ ձայն մը լսուեցաւ թէ թշնամին բերդին մէջն է:— Սարսափն ամէնքը պաշարեց, երբ տեսան բերդին գաւթին մէջ արաբացի ճիւղներու սուսերամերկ խումբ մը, որ քանի կ'երթար կ'աւելնար, պահապանք վար թափուեցան պարիսպներէն եւ կատաղի կռիւ սկսաւ այդ յօրին բերանը ուսկից թողալով դուրս կը ժայթթէին այդ գազանները. մէկ ինկնողին տեղ երկուք կը բուսնէին վայրկեանէ վայրկեան, պահապանաց յուսահատ կռիւը յայտնի բաւական չէր ազատելու, ներքին պալատը, որ մեծ ամրութիւն չունէր, ուստի կանանց եւ տղայոց վայնասունը, ճիչն ու աղաղակը, այդ զինուց շառաչմանց, մեռնողներու ողորմ հառաչանաց, կատաղի պատերազմողաց յիշոցներուն եւ հայիոյութեանց հետ, տեսնողի եւ լսողի ահուդող կը պատճառէր: Վերջապէս յարձակողք յաջողեցան մեծ բերդին դուռը